

Նախ կուզեմ անգամ մը եւս շնորհակալութիւն յայտնել սփիւռքի կազմակերպութիւնների ղեկավարների եւ ներկայացուցիչների համահայկական համաժողովի ընթացքին ձեր, ինչպէս նաեւ նախարարութեան ողջ անձնակազմի, ուշադրութեան համար: Իսկապէս վայելք էր մասնակցիլ հաւաքի մը, ուր ամեն մասնակից եւ կազմակերպիչ սրտանց կաշխատէր յանուն հասարակաց շահին:

Ինչպէս մեր խօսակցութեան մէջ անդրադարձած էի, Սփիւռքի կայացած գաղութներուն մէջ, որոնք տասնամեակներու կազմակերպեալ կեանքի փորձ ունին իրենց ետին, միշտ պէտք է աշխատիլ կազմակերպութիւններուն հետ. անհատները կրնան երթալ ու գալ, բայց կառոյցները կը մնան եւ կը շարունակեն աշխատանքները: Օրինակ. այս տարի ես էի ՀՅԴ Գանատայի կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչը, եկող տարի կրնայ մէկ ուրիշը ըլլալ, բայց կազմակերպութիւնը, իր երկարաշունչ ծրագիրներով եւ յանձնառութիւններով, կը շարունակէ գործել առանց ընդմիջման: Առ այդ, կը խնդրեմ, որ ձեր ելեկտոնային հասցեացանկին վրայ աւելցնէք կեդրոնական կոմիտէի հասցէն (arfcam@horizonweekly.ca) եւ Գանատայի շրջանին վերաբերող հարցերուն համար չվարանիք դիմել այդ հասցեով: Անհատական կապերով գործելու եղանակը գուցէ միակ ձեւն է անկազմակերպ գաղութներուն համար, որոնք տակաւին չունին ժամանակի փորձին դիմացած կառոյցներ, բայց միշտ պէտք է նախընտրել հաւաքական կապերու եղանակը եթէ հնարաւոր է:

Ձեր աշխատակիցներէն բարեհամբոյր կին մը, որուն անունը դժբախտաբար չունիմ, երկու անգամ խնդրեց ինձմէ Լեզուի եւ կրթութեան աշխատանոցի ընթացքին ունեցածու ելոյթի գրութիւնը, գոր չունէի որովհետեւ բանաւոր ելոյթ էր: Բացատրեց որ անհրաժեշտ էր զայն ունենալ, համաժողովի նիւթերու տպագրութեան ամբողջականութեան համար, ուստի խոստացայ շարադրել ելոյթս եւ զայն առաքել: Հետեւաբար կը խնդրեմ կցեալ գրութիւնը փոխանցէք առ որ անկ է: Ձայն կցած եմ երկու տարբերակով:

Յարգանօք,

Վիզէն Աբրահամեան
Մոնթրէալ, Գանատա

Շնորհակալութիւն եմ հայտնում Սփիւռքի կազմակերպութիւնների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողովին Ձեր կողմից ցուցաբերած հյուրընկալության և դժվարին աշխատանքի համար:

Արա Ազիշյան
ԱՄՆ

